

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հ Ե Ղ Ո Ւ Ժ Ը



891.99

Խ-28

19 NOV 2011

891.99

Խ-28

ԱՄ.

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հ Ե Ղ Ո Ւ Շ Ը

(Կովերիսակառն պատմվածք)

Թիֆլիս—1928

07.05.2013

34345

Հ Ե Ղ Ո Ւ Ծ Ը

Ս. գյուղի աչքի ընկնող «համփա»-ներից *)
եր Հեղուշի հայր Սերգոն:

Թեև հարստութիւննից «աստված» չեր
զրկել, բայց զավակներն կողմից նա գուրկ եր-
միայն ճ տարեկան Հեղուշն եր, վոր լցնում եր
տունը իր զիլ ու պահանջկոտ լացով ու իր ման-
կական ձայնը խառնում վոչխարների ու գառ-
ների մայունի հետ:

Ճարպիկ ու «հեռատես» մարդ եր Սերգոն,
նա կարողանում էր իր ունեցածը որեցոր ա-
վելացնել, և այդ հատարում եր ի հաշիվ գյու-
ղացիների: Նրանց հողն եր կիսովին ցանում, վեր-
ջը խաբում, մի փոր հացով դաշտերում ու ար-
տերում շնեղճ գյուղացիներին բանեցնում ու այդ
բոլորը նա այնպիսի ճարպիկութեամբ եր կատա-
րում, վոր գյուղացիք նրա լավութեան տակից
զուրս գալու համար մի բան ել պարտ ելին մը-
նում նրան:



8461-53

*) Համփա — հարուստ:

Նրա հարստութիւնը գլուղի սահմաններից դուրս գալու ճանապարհ եր փորոնում ու Սերգոն յերկար ժամանակ չափում, ձևում եր այն միտքը, թե յերբ և ինչպես քաղաք տեղափոխվի, այնտեղ դուքան բանա:

Մի որ ել նա կանչեց քոխվին, մի յերկու յել «պանյաթիներ» *), ի հարկե, գլուղի գորբաներից, ու իր ունեցած-չունեցածը նրանց ներկայութեամբ պահ տալով իր յեղբայր Գալուստին, ինքն իր ընտանիքով տեղափոխվեց քաղաք:

Քաղաքում նա պարապ չմնաց, բաց արեց մի փոքրիկ դուքան և սկսեց առևտուր անել:

Գլուղից ցորեն, յուղ, պանիր, բուրդ փթերով եր ստանում ու քաղաքում վաճառում:

Գալուստն ել յեղբորից պակաս չեր, նա շարունակում եր խեղճի ու աղքատի ունեցածը փոշ միայն քաղաք տեղափոխել, այլ և Սերգոյի ուղարկած ապրանքը մեկին յերկուսով սողացնել գլուղացիների վրա:

Հաջող ելին Սերգոյի գործերը:

Անհոգ և ուրախ եր փոքրիկ Հեղուշը:

Ինչն եր պակաս միևնուճար աղջկան, իր ուզածի պես եր իր ժամանակն անցկացնում:

Հեղուշը մոռացավ գլուղի կյանքը:

*) Պանյաթի—հասկացող, դործին տեղյակ:

Նրա սիրածը քաղաքի ամենաաչքի ընկնող զբոսավայրերն ու իր նման պճնասեր ընկերուհիներն ելին:

Տարիներն անցնում ելին: Հեղուշը կատարյալ «որիորդ» եր դառնում, բուրժուա ընտանիքի հարագաս դավակ:

Վերջապես յեկավ Հսկանբերդյան հեղափոխութիւնը և իր կնիքը դրեց նաև Հեղուշի հոր գործերի վրա:

Դուքանը այլևս ցանկալի արդյունք չեր տալիս: Մթերքն ել գլուղից սակավ եր ստացվում: Նա արդեն վախենում եր, փոր քաղաքում չկարողանա ապրել և միաժամանակ զրկվել նաև գլուղից:

— Ե՛, եսպես ելանիժված կյանք կլինի,— գանգատվում եր նա,— եսպես ել որենք կլինի, չեն թողնում, փոր ժարդ «հալալ» աշխատանքով ապրի:

Մեկ-մեկ ել դառնում եր աղջկանն ու խրատում նրան.

— Հա՛, Հեղուշ, չիմանամ, սրանց անիժված ժողովներին գնաս, այնտեղ չաթուքասաններ են հավաքվում, ինչքան աղքատի փշացած լակոսներ կան, այնտեղ են: Խելոք յեղիք, հայրիկիդ լսիր:

Հեղուշը լուռ լուռ եր հորը, մյուս կողմից

մտածում հոկաեմբերյան հեղափոխութիւնից առաջացած փոփոխութիւնները վրա, բայց ընտանիքի և հին դպրոցի ազդեցութիւնը մտել եր նրա մեջ և նա չէր կարողանում միանգամից հրաժարվել:

Սերգոյի գործերը քանի զնում վատթարանում եյին:

— Ս, կնիկ, — ասաց մի ուր իր կնոջը, — ել ըստի ապրել չի՛ լինում, դու քանն ել ենքան ոգուտ չի բերում, վնձ թե գեղում հողից ել զրկեն, արի, դու աղջկա հետ գնա գյուղ, տեսնենք վոնց ե ըլում, յետ ել հետո կգամ:

Յերբ Հեղուշը իմացավ, վոր գեղ են գնալու, մի կողմից ուրախացավ, վոր պետք ե ճանապարհորդի, նոր տեղեր, նոր բաներ տեսնի, մյուս կողմից՝ մի ինչ վոր բան ճնշում եր նրա սիրտը, զանազան մտքեր առաջացնում:

Նա զանազան հարցեր եր տալիս մորը.

— Մայրիկ, գյուղում լավ զբոսավայրեր կան թե վոչ:

— Կա, բա չկա, — ասում եր մայրը. — բա մեր հանդերը ի՞նչ են, գեղատեղը, Կենտ-ժառը, Տեր-տերանց հողը, Ծուռ արաի գլուխը, բա զբանք ի՞նչ են, ման գալու տեղեր չեն:

— Թատրոն, կինո, կլուբ, լոտո...:

— Ձե, Հեղուշ, չե, եղ տեսակ բաներ գյուղում չկան:

— Բայց յերեկոները ո՛ւր են զնում գյուղացիք ժամանակ անցկացնելու:

— Ե՛, Հեղուշ ջան, հենց վոր մթնում ե, հավաքվում են ողաներում կամ գոմերում ու զրից անում, խոսում իրենց գյուղի կյանքից:

— Կնանիք, աղջկերք ե՛լ են հավաքվում, — հետաքրքրվում եր Հեղուշը:

— Ձե, կնանիք միայն շուրը գնալիս՝ հավաքվում են աղբրի գլխին, մի քիչ այնտեղ իրար հետ զրից անում ու կփերը ուսած յետ դառնում տուն:

— Ուրեմն, քո ասելով, կնանոնց կլուբը աղբուրի գլխին ե — ասաց Հեղուշը ծիծաղելով:

Այս բոլորը լսելով, գյուղը վատ տպավորութիւն եր թողնում Հեղուշի վրա: Նա մտածում եր. «Ի՞նչպես պետք ե անցկացնի իր ժամանակը, առանց զվարճատեղերի, զբոսավայրերի, մաման ասում ե՛ Կենտ ծառը, տեսնես ի՞նչ տեսակ զբոսավայր ե, յերևի մի մեծ այգի կլինի, մեջն ել մի մեծ ծառ ու դրա համար ե կոչվում «Կենտ ծառ»:

— Մայրիկ, այն զբոսավայրը, վոր դու տասցիր, ի՞նչ ո՛ւ է կոչվում «Կենտ ծառ»:

— Նրա համար, աղջիկս, վոր շորս բոլորը

մեր հանգերն են ու ճամփի դրազին միայն մի մեծ կենտ ծառ կա, դրա համար ել կոչվում ե «Կենտ ծառ»:

Յեւ Հեղուշը մնում եր շվարած ու զարմացած, թե ինչ տեսակ գրոսավայր ե:

Մի քանի սր ել—վրա հասավ գյուղը գնալու սրբ:

* * *

Հեղուշը վազոնումն ե, գլուխը դուրս հանած պատուհանից, զիտում ե իր անցած ճանապարհը. դաշտերն ու այգիները, գյուղերն ու կայարանները, սավերի նման, մեկ յերևում են և իսկույն եեթ անհայտանում. նրա աչքի առաջից այդ պատկերները շարան-շարան գալիս անցնում են. պահ մի Հեղուշը իրեն գգում ե կինոյի սթյակում, ուր նվագի ներդաշնակութամբ ցույց են տալիս պատկերները: Իսկ այստեղ նվագողը գնացքն ե, վոր իր սուլոցով ու դրդոյունով փոփոխ, փան, առաջ ե սլանում: Դաշտերին, տափաստարաններին հետևում ե լեռների շարանը: Գնացքը մտել ե մի նեղ կիրճ և իր համար ճանապարհ բանալով ու գալարումներով առաջ ե ընթանում: Գծի յերկու կողմը բարձրանում են լեռները, մերկ, ժայտոտ, տեղ-տեղ մացառներով ծածկված: Սյուսեղ ու այնտեղ լեռների ձերպերին ծիծեռնակի բնի նման կախ են ընկած գյու-

ղերը: Սարի ստորոտից հասում ե Գ. գետակը, վոր կարծես իր խոշոցով ուզում ե մրցել գնացքի դրդոյունի հետ:

Վերջապես գնացքը կանգ առավ Փ. կիսակայարանում, վորտեղից մինչև Հեղուշենց գյուղը 7 վերստ եր:

Գյուղից արդեն յեկել եր Գալուսար դիմավորելու մեծ հարսին, նրա հետ եր և փոքրիկ Վարսուր, վորը Հեղուշից 6 տարով փոքր եր:

Իրերը ցած են բերում. հեռվում կանգնած ե սայլը:

Մինչդեռ իրերը դարսում են սայլին, Հեղուշը շվարած իր շորս կողմն ե նայում: Վերտեղ ե նա.—մի փոքրիկ անակ, վորը կայարանի տեղ ե ծառայում, ընկած ե ձորի մեջ, շուրջը դատարկ, մի նեղ քարքարոտ ճանապարհ գեպի ուր-վոր գցել ե իր ուղղությունը, դեպի անհայտը և Հեղուշի տրամադրությունը փոխվում ե: Նա տխուր ե:

— Մայրիկ, միթե փոքրով պետք ե գնանք—հարցրեց նա—տեսնելով, վոր վոչ կառք կա, վոչ ել ավտո:

— Ինչո՞ւ փոքրով, —մեջ մտավ հորյեղբայրը,—բա սելը խի՞ յինք բերել, հրես գեղը մի սրհաթում կհասնենք:

Ճանապարհը գառիվայր եր ու քարքարոտ.

սայլի անիվները մեկ այս բարին եյին դեմ առնում, բարձրանում ու սայլը ցնցում, մեկ մյուսին: Յեզները գծվարությամբ եյին առաջ գրնում: Հեղուշին այնպես եր թվում, թե տեղից չեն շարժվում— այնքան ծանր եր շարժվում սայլը: Մի-մի անգամ ել այդ անդորրությունը խանգարում եր Գալուստի ձայնը, վորը դիմում եր յեզներին. «Հո՛, Խնձոր ջան, դե՛, Գալաշ»:



Այս բոլորից հետո Հեղուշի աչքին վուշինչ չեր յերևում. վոչ սարերի գմայլեցուցիչ տեսարանը, նրանց կանաչ գգեստը, վոր ներկված եր գույնզգույն ծաղիկներով, վոչ ազատ սարերի մաքուր ողբ:

Նա իր մտքի հետ սլացել եր դեպի քաղաք:

Հեղուշի առաջ պատկերանում եյին արագընթաց ավտոններն ու տրամվայր, կառքերը, մարդիկ, մեկը մյուսի յեակից պատկերները հաջորդում եյին իրար:

— Ո՛հ, ի՛նչ սարսափելի լե սայլով ճանապարհորդելը,— գանգատվում եր Հեղուշը. — յե՛րբ գյուղը կհամենք, մայրիկ:

— Հեռու չե, Հեղուշ ջան, հրես, սարը շուռ գանք, գեզն ա:

Վերջապես անա և գյուղը: Հեռվից աներն իրենց բաց շարգախներով, նմանվում եյին մի-մի գազանի, վոր բերանները բաց արած, կարծես ուզում եյին կուլ տալ մարդու:

— Սա ի՛նչ ե, մայրիկ, բա գյուղի աները կուշաներ չունեն, բոլորը հողից ե՛:

— Բաս ի՛նչ եյիր կարծում, սա խո քաղաք չի, գեղ ա. գյուղացուն ձվ ե տվել ենքան փող, վոր կարողանա իր տան կտուրը ժեշտով կամ կրամիտով ծածկի,— պատասխանեց Գալուստը:

— Ինչո՛ւ, ենքան չեք աշխատում, վոր կարողանաք մի կտուր ել ե ծածկեք— սասց Հեղուշը:

— Կմնաս գեղում, կիմանաս, Հեղուշ, — պատասխանեց Գալուստը:

— Են ինչե՛ր են, հորյեղբայր, այ են, վոր կտուրների և դռների առաջ գմբեթածև յերևվում են:

— Աթարի գեզն ա, աթարի, մեր վառելիքի:

— Ի՛նչպես, մի՛թե փայտ չեք վառում,— զարմացած հարցրեց Հեղուշը:

— Չե, աթադան, բաբադան, աթարի յենք

սովոր, բասմա յենք քցում, չտրացնում կամ ձեռն-
թուխ անում ու հետո ա վառվում:

Հեղուշը մնացել էր զարմացած ու տարա-
կուսված: Գյուղի գրավիչ պատկերը նաեմանում
էր այդ բոլորի առաջ, նա սկսում էր զզվել
գյուղից:

Մնա և գյուղը. վոչ փոփոցն է յերևում, վոչ
էլ տան բակերը: Մարի լանջին փոփած են տը-
ները, մի տան կտուրը մյուսի բազի տեղ է ծա-
ռայում, կարծես տներից սանդուխտ է շինված՝
դեպի սարը բարձրանալու:

Հեղուշնց տունը բազկացած էր հացատնից,
մառանից, մի փոքրիկ զոնադատնից-սթախից և
զոմերից; վորոնք կպած էին հացատանը.

Տնեցիք իրար են անցել: Մեծ հարսը
յեկել է քաղաքից պետք է, վոր մի բան պատ-
րաստեն, հյուրասիրեն:

Հացատան թոնիրը վառած, աթարի մուխը
անոփ մեկ է յեղել: Միայն յերթիկ—պատու-
հանն է, վոր և ծխնելույթի տեղ է ծառայում և
լուսավորում հացատունը, պատերն ու սփորքը,
մխից սևացած, կարծես սև ներկով ներկած լինեն:

Հեղուշը ներս է մտնում, բարևում, բայց
աչքերը ծխից արտասուքով լցված դուրս է թըռ-
չում բակը:

— Ի՞նչ սարսափելի բան է գյուղում ապ-

րելը, — մտածում էր նա, — միթե կարելի յե այս
ծխի, այս կեղտոտ-սևացած տան մեջ ապ-
րել. չէ, անկարելի յե, յես չեմ դիմանա, յես կը-
գնամ քաղաք:

Նա յերկար այդպես կանգնած մնաց ու չը-
նկատեց, թե ինչպես յերկու մեծ շուն մոտե-
նում էյին իրան, և յեթե այդ ըոպէյին Վարոսը
չէր գուրս յեկել, շները վրա էյին պրծնելու ու
քրքրելու իրենց անձանոթ տիրոջը:

Հեղուշը վախեցավ և ներս մտավ տուն:
Գյուղը իր վառ կողմերով էր դիմավորում Հե-
ղուշին:

Նա փաթաթվեց մոր վզովը և լացակուամ
ասաց.

— Մայրիկ, ինձ ուղարկիր քաղաք, յես այս-
տեղ չեմ մնա, յես վախենում եմ, ատում եմ
գյուղը:

— Ինչո՞ւ, Հեղուշ ջան, ինչ պատահեց քեզ,
ինչից ես վախում:

— Ղափլանն ու Բասարը վրա պրծան, նրա-
նից է, — պատասխանեց Վարոսը:

Մայրը սկսեց մի կողմից նախատել, իսկ
մյուս կողմից գուրգուրել աղջկան.

— Վոչինչ չկա, աղջիկս, կսովորես, բա մենք
վո՞նց ենք մեծացել այս սև պատերի մեջ: Հալա
նոր ես, աչքիդ այդպես է թվում: Վաղը Վարոսի

հեա կգնաս հանդը, գեղամիջում կծանոթանաս
աղջիկների հեա, — կուրախանաս: Ճանապարհից
յեկած, հողնած ես, հաց կեր, կքնես, կհանգըս-
տանաս, ամեն ինչ լավ կլինի:

— Քյեոսվի աղջիկ, — ասաց Գալուստը իր
կնոջը, — խոնչեն բաց արա, հաց դիր, սոված կլինեն:

— Ըստեղ եք հացը ուտելո՞ւթե ոթախում, —
հարցրեց քյոսվի աղջիկը — Նարգիզը:

— Ձես իմանում, վոր հլա ոթախը չենք
մաքրել, կարտոփիլը փռած մնում ա, դուք ըս-
տեղ հաց կերեք, յես ու Վարոսը գնանք կարտո-
փիլը գուրս տանք:

Սոնչեն դրին, չորս կողմն ել փալաս գցեցին
ու նստան ճաշի:

Հեղուշը, քաղաքում մեծացած աղջիկ, չը-
գիտեր փոքերը ծալած, թե՞ փռած նստի ու ճա-
շի: Մի կերպ տեղավորվեց: Ետը սովորական
սպասը դեն եր դրված և այդ որը դոնադեն-
րի համար «քյաշկա» *) եյին յեփել: Հեղուշը սո-
ված եր, մի կերպ վոսները կուչ ու ձիգ անե-
րով կերավ «քյաշկայից», ճիլ պանիրն^{ու} ել վրեն
մանրացրած. վերջումն ել մի քիչ կարագ ու ձվա-
ծեղ և վերկացավ սեղանից: Վոտքերը ցավում
եյին ծալած նստելուց, մարմինը կարծես ջարդ-

*) Գյաշկա — Յավարով յեփած փլավ:

ված լիներ սայլի ցնցումներից և այս բոլորը այն-
պես վատ եյին ազդել, վոր անկողին մտնելն ու-
քնելը մեկ յեղավ:

* *

Դեռ լույսը չեր բացվել, Գալուստի ընտա-
նիքն արդեն վոաքի յեր:

Այսոր պեաք ե կարտոփիլը ցանեյին վոր-
բեայրի Շողերի հողում, վորը վաղուց Գալուս-
տի ու Սերգոյի սեփականությունն եր դառել 2
կոտ սև գարու տեղ, վոր մի ժամանակ տվել
եյին խեղճ այրուն:

Այրի Շողերը յերեք վորբերի տեր եր, իր սև որը
քաշեր տալիս սրահնրա դռանը ծառայելով, քաղհան
անելով, հնձին ել իր աղջկեքքով դուրս եր գա-
լիս հնձած արտերը, հատիկներ հավաքում և այդ-
պիսով մի կերպ կառավարվում: Արշայույսը (Շո-
ղերի 14 տ. տղան) մի աչքաբաց ու քաղցրա-
խոտ տղա յեր, նա նոքարություն եր անում և
ողնում իր մորն ու քույրերին:

Հեղափոխության առաջին տարիներն եյին:
Դեռ գյուղի գորբաներն իրենց իրավունքների
տերն եյին, խեղճ քյասիլը դեռ աչքը չեր բաց
արել, իր նոր իշխանության, իր շահերի պաշտ-
պանի որենքը լավ չեր ըմբռնել:

Ի բնե սովոր խոնհարվելու, հնազանդվում
եր, ծպտուն չեր հանում զանազան Գալուստ-

ների, Սերգոնների անիրավացի արարմունքների գեմ: Այդ որը Գալուստը իր ընտանիքով, բացի մեծ հարսից ու Հեղուշից, գտնվում եր Շողերի հողում:

Հեղուշը ուշ վեր կացավ և մի բաժակ կաթ խմելուց հետո գուրս յեկավ փողոց՝ դուռը տեսնելու: Նայեց իր շորս կողմը, վոշ վոք չկար, բացի հեռվում յերևացող սայլերից, վորոնք բարձած շտապում էյին դեպի արտը՝ բնության բարիքը պահ տալու գետնին:

Իրմացի արտերում մարդիկ ու կանայք իրենց յերեխաներով ինչ վոր քանդում են, կըստնում, բարձրանում, մյուս կողմում՝ յեգները լծած չութ են անում և հորովել յերգում:

Ուրախ և դյուզացին այդ ժամին...

* * *

Բայց ուրախ չե այլի Շողերը, նա իր ազջիկներով մնացել եր դյուզում, գործ չկար ու հեռվից նայում եր, թե ինչպես Գալուստը իր մի կտոր հողում, են ել ջրովի հողում, կարտֆել եր ցանում, իսկ ինքը իր հավաքած, իր վորբերի բերնից կարած կարտֆելը պետք ե տա ուրիշներին կիսովի ցանելու, են ել, ով դիտե, կարտուհաննի ժամանակ իրեն ինչքան կհասցնեն. ես վարելու, ես բուզը տալու ու վերջն ել մե-

կին յերկու *) ձեռքիդ կցեն ու գնա արևիդ ձենն ամա, ելի են սովածը, ելի են զրկվածը:

Այդ մտածմունքի մեջ եր Շողերը, յերբ Հեղուշը հագած-կապած անցավ նրա մտաից:

— Վոշ հասնես մուրազիդ համփայլի ազջիկ, խանումի պես ման կգաս, բա ինչ, հերդ հոգս գավթել ա, իմ վորբերի բերանի թիքեն խըլել, սոված թողել, հիմի ել իմ հողում կարտֆել ե ցանումիսկ իմը հորումն ա փթում...:

Շողերը յերկար գանգատվում եր ու անիծում, բայց Հեղուշը վոշինչ չհասկացավ նրա գանգատներից, միայն պառավի անեծքը, նրա խեթ նայվածքը և հողի գավթելու բառերը խըրվեցին նրա մտքի մեջ:

Հեղուշը այդ մտքերով տարված յերկար թափառեց, բայց վոշ վոք չկար, վոր հետը խոսեր, ման գար, բոլորը գործի էյին, փոքր ու մեծ հանդերումն ու դաշաերումն էյին:

Շողերի խոսքերը նրա մտքից չէյին հեռանում: Նրա սրտում ինչ վոր կասկածներ առաջ յեկան, բայց իրեն պարզ հաշիվ չեր կարողանում տալ, թե ինչն եր անիծում իրեն, ինչ ե կատարվում իր շուրջը:

Կարսոմելը ամենաբնիկ տարիս և մեկին հինգ (լավ բերքը մեկին 10—11)



Տուն դառնալիս, Հեղուշը կանգ առավ Շողերի տան դռան առաջ:

Շողերի մեծ աղջիկ, Մարգարիտը, վորի շրբերը կարկատած եյին գուհնգգուհն լաթերով, վտաբորիկ կանգնել եր իրենց դռան շեմքին ու գուլպա գործում: Հեղուշը մտակեցավ նրան և ու-



ղեց խոսել հետք, բայց դեռ բերանը չեր բաց արել, վոր Մարգարիտը «չանչ» անելով Հեղուշին, ներս մտավ տուն: Մարգարիտը հասակակից եր Հեղուշին:

Հեղուշը մնաց շվարած. ի՞նչ եր արել այդ աղջկան, վոր նա «չանչեց» իրեն ու առանց խոսելու հեռացավ, կամ այն կնոջը, վոր անիծեց իրեն:

Հեղուշը անշարժ մնացել եր կանգնած դռան առաջ և իր մտքում համեմատում եր իրեն այն

պատահողոված շրբերով աղջկա հետ: Իսկապես, ինչո՞ւ յե ինքն այսպես հագած-ծկապած, իսկ այն աղջիկը, վտաբորիկ, կարկատած շրբերով, մտածում եր նա, — կամ ինչո՞ւ այն աղջիկը արհամարհեց իրեն:

Այս բոլորն այնպիսի ազդեցութիւն ունեցավ Հեղուշի վրա, վոր նա վճռեց ինչ գնով ել լինի, իմանա իսկութիւնը:

Առաջին անգամն եր զգում նա, վոր ինքը եւ Հեղուշը չե, ինչ վոր քաղաքում, նա կասկածով եր նայում իրեն, նույն իսկ վախենում, դուցե և ատում իրան: Նրա աչքերից չեյին հեռանում վոչ Շողերը, վոչ Մարգարիտը, վոչ այն անեծքը, վոչ «չանչը», վոչ իր շրբերը, վոչ այն մերկ ու կարկատանների մեջ թաղված աղջկա գոռոզութիւնը, արհամարհանքը: Նա թույլ եր բացատրելու այդ բոլորը:

Նա այդ մտքերով տուն վերադարձավ:

Վարտար հանդից յեկել եր հանդվորին հաց տանելու: Նա առաջարկեց Հեղուշին գնալ իր հետ հանդը. Հեղուշը համաձայնեց:

Վարտար հացը շալակած, պտուկով սպասն ել ձեռքին, առույզ քայլում եր և ուրախ-ուրախ պատմում գյուղից ու ցույց տալիս Հեղուշին իրենց հողերը:

— Ես արտը Գալոյի տղա Պետրոսինն ե,

առջի տարին մեկ կոտ գարով ենք առել, ես բուտանը Վարչադենց հարսինն ե, են՝ վոր մի յանը բռնված ե, 10 գրվ. ալյուր ու մի կոտ կարտոֆիլ ենք տվել:

— Ի՞նչ, Վարոս:

— Շատ ե համ, սպասիր, ավելի շատ բաներ կիմանաս, Հեղուշ: Դեռ յերկար կը շարունակեր Վարոսը, բայց հանկարծ միտը մի բան ընկավ և դարձավ Հեղուշին ու ասաց.

— Գիտես, Հեղուշ, կիրակի մենք ժողով ունենք, կգաս, չե՞ ժողովին:

— Ին՞չ ժողով, — հարցրեց Հեղուշը:

— Կոմյերիաների ժողով, մեր գյուղում 8 հոգի ջահեղներ գրվել են կոմյերիա, յես ել ուղեցի գրվեմ, համա չթողին, ասացին փոքր ես: Կիրակի ժողով են անելու, վոր մեզ ել ուրիշ տեղ ընդունեն. ինչ վոր ասացին, մոռացա:

— Փոքրերը պիտներն են, — ասաց Հեղուշը, — բայց հորեղբայրը կթողնի՞, վոր դու պիտներ գրվես:

— Վա, ինչի՞ չպիտի թողնի, ի՞նչ կա վոր:

— Քաղաքում ինձ հայրիկս չեր թողնում այդպիսի տեղեր ման գալու, ասում եր, վոր լավ չե, այնտեղ յերեխաները փշանում են:

— Իսկի յեկ չե, — վրա բերեց Վարոսը տա-

բացած: Հրեն Շողերի տղա Արշալույսը, են՝ վոր նրանց հողը հիմի մենք կարտոֆել ենք ցանում, կոմյերիա ե, լավ ել անուն ունի, ասում են, վոր շուտով նախագահ կջուկեն:

— Կանգնիր, Վարոս, և ինձ ճիշտ ասա, եղ ին՞չ հող ե, վորի համար այսոր մի կնիկ ինձ ա-նիծում եր:

— Աղբրի ճամբրին, Հեղուշ:

— Այո, աղբրի ճամբրին:

— Հենց եղ Շողերն ե, նա մեզ պարտ եր յերկու կոտ գարի, և նրա պարտքի տեղ նրա հողը մենք ենք ցանում:

— Բայց չե՞ վոր նրան ել փայ կտաք այդ ցանածից, չե՞...

— Չե, վոչինչ չենք տալիս, եսա իրեք տարի ա ցանում ենք:

Հեղուշը հասկացավ ամեն ինչ...

Ինչ վոր հեղաշրջում եր կատարվում Հեղուշի սրտում:

— Յերկու կոտ գարու փոխարեն յերեք տարի յե ցանում են վորբի հողը ու նրան զըրկում, վոչինչ չեն տալիս, — վրդովված պատասխանեց Հեղուշը, — և դու, Վարոս, դեռ ուղում ես պիտներ գրվել, հոպա ի՞նչպես ե, վոր վորբերին, հիվանդներին, աղքատներին ճնշում եք, նեղացրնում, հրեդ. դու լավ հագած, գուլպաներդ ու

արեխներդ վոտքիդ, փորդ կուշտ, բա խակի չես մտածել, վոր Շողերն իր աղջիկներով սոված կմնա, Վարդիշաղի հարսը առանց տաք կերակուրի. դրանք, եղ խեղճերը ի՞նչ նեղություն են քաշում, տաս, խակի մտածել էս դրանց մասին: Յես մենակ քեզ չեմ մեղադրում, ինձ ել եմ եղ հարցերը տալիս:

— Լավ ես ասում, Հեղուշ, համա յես ի՞նչ կարող եմ անել, ո՞վ ե ինձ մարդատեղ գնում. անցյալ որն ել հայրիկս կես կոտ զարով մի լավ խալիչա առավ Սիրունենց Նազլուից, են վոր մարդը կռիվ ե գնացել ու են գնալն ե, վոր գնացել ե:

— Բա ես գյուղում դատավոր չկամ, խորհուրդ չկամ, վո՞նց են այդ տեսակ բաներ թողնում:

— Կա, բա չկա, դե ասում են հլա նոր ա, դեռ գատ չեն հասկանում, համ ել համփա Գալուստից, Սերգոյից վախենում են, չե՞ վոր մենք հարուստ ենք:

Այսպես խոսելով նրանք հասան արտը:

Հեղուշը նայում եր, թե ինչպես են քանդում հողը և կարտոֆելը ցանում, իսկ մյուս կողմից մտածում. — ո՞ւմ հողում ո՞վ ե ցանում, ի՞նչպես ե, վոր մի կոտ զարով կամ կարտոֆելով խլում են ուրիշի հողը, գորգը:

Այս բոլորը միանգամից տակն ու վրա ա-

րեցին Հեղուշի սիրտը. նա մտածեցավ հորեղբորը և հարցրեց.

— Հորեղբայր, յեթե Շողերը գանգատ անի, չե՞ կարող այս հողը խլել:

— Բա ինչի՞ են ինձ «համփա» Գալուստ ասում, վոր ինչ վոր աղքատ մի Շողեր կարողանա ինձանից հող խլել:

Այս բացատրությունը ավելի գրգռեց Հեղուշին և նա վճռեց ինչպես ել լինի ողնել Շողերին:

*
*
*

Որերը գլորվում ելին, և ամեն մի նոր որ ցույց եր տալիս Հեղուշին նորանոր պատկերներ ճնշվածների և աղքատների կյանքից:

Նրանց լացը, անեծքը, սովածությունն ու մերկությունը մեկ-մեկ բաց ելին անում նրա աչքերը: Յեվ այդ բոլորի տպավորության ասի Հեղուշը փոխվում եր, վերածնվում:

*
*
*

Անցան ելի մի քանի ամիսներ:

Հեղուշն աշխատում եր մտենալ տեղական կոմյերիտներին, չքավորներին, բայց կարծես բուրբը խոսքը մեկ արած յերես ելին դարձնում նրանից. առաջինները իբրև «համփայի», իսկ յերկրորդները իբրև իրենց զրկողի և ճնշողի աղջկանից:

Հեղուշը մնացել էր մենակ իր մտքերի հետ, մի ինչ վոր ասելու թյուն գգալով դեպի իրեն, դեպի իր ծնողները. և նա վճռեց ինչ գնով ել լինի՞ մտնել կոմյերիանների շարքերը, տեսնել Արշալույսին, խոսել նրա հետ...

Բայց ինչո՞ւ մենակ Արշալույսի հետ և վոր մի ուրիշի:

Նրա մտքից չէր հեռանում պատավ Շողերը, նրա աղջիկ Մարգարիտը, իր «չանչով», Վարշաղենց հարսը իր անդամալույծ վտանքով:

Այս բոլորը դալիս պատկերանում էյին նրա առաջ, և նրան դարձնում ավելի համարձակ դեպի իր ապագա քայլը:

Նրա աչքին այլևս գյուղն այն չէր, ինչ վոր առաջ, նա այժմ վոր թե ասում էր գյուղը, այլ սիրում:

Կիրակնոցյակ եր: Գյուղի կոմյերիանները կարգի էյին բերում, մաքրում գյուղը, աղբահույսները, ճանապարհներ շինում և այլն:

Նա տեսնում էր, թե ինչպես մեծերը ևս, հրապուրվելով ջահելներին, իրենք ել սկսել են դործի անցնել, քանդված կամուրջները նորոգում, յերիտասարդներին ոգնության հասնում:

Հեղուշի վրա ազդում էր այդ բոլորը և նրա մաքում ավելի յեր ամրանում կոմյերիանների շարքերը մտնելու ցանկությունը:

Կիրակնոցյակը կրկնվեց յերկրորդ անգամ: Գյուղի ջահելները կոմյերիանների հետ միասին աշխատանքի էյին շատալում. վորը բան վերցրած, վորը քլունգ, մի քանիսն ել թոկ և այլն գործիքներ՝ զնում էյին ու յերգում:

Հինն անցել է, նորն է յեկել,

Նորին մատաղ, տղերք ջան,

Դե շուտ արեք, հերթն յեկել է,


Մենք նոր ճամբով պիտ գնանք:

Ուսում անենք, նոր մարդ դառնանք

կոմյերիաի շարքերում,

Մեծ կենինի ճամբով գնանք,

Շող տանք լույսը մեր գյուղում:



Հեղուշը դուանք կանգնած՝ աչքը նրանցից չէր հեռացնում, անի էր քաշում, թե ինչո՞ւ ինքն

եւ նրանց հետ չե, նրանց հետ չի ուրախանում, նրանց հետ չի աշխատում:

Վերջապես նա գրում է իր դիմումը:

Հեղուշը սրտատրոփ սպասում էր այն ուրին, յերբ պետք է քննութեան առնեյին նրա դիմումը: Թեև մալը, հորեղբայրը շատ եյին ստում, խրատում, սպառնում, վոր յետ կենա իր մտադրութեանից, վոր նրան կուղարկեն քաղաք, հայրիկի մոտ, բայց Հեղուշը կանգնել էր իր ասածի վրա և միշտ եւ դիմադրութեան եր ցույց տալիս:

— Հեղուշ, հայրդ վոր իմանա, շատ կնեղանա, հրեն նամակ է ուղարկել, վոր քեզ ուղարկենք քաղաք, արի հեռու մնա այդ անմիտներից, քյասիբ-քյուսուբի լակոսներից, ամոթ է մեզ համար,—ասում եր մայրը:

— Յես քաղաք չեմ գնա, այստեղ ինձ համար ավելի լավ է. իսկ այն քյասիբները, վորոնց դուք անպատվում եք, ինձ համար ավելի բարձր են, քան ձեր հարստութեանը, վոր դիզել եք նրանց քրտնքի աշխատանքը խելով:

— Այ վորդի, եզ ինչե՞ր ես խոսում, մի լավ մասածիր, մեր անունին ամոթ է, խալիւր ի՞նչ կասի, («համփա») Սերգոյի աղջիկը, ոսհաթի յերեխաների հետ, կոմսոմոլ է դառել. տես հլա մի

աղջիկ կա՞ նրանց մեջ, բա յես քո հորը ի՞նչ ջուղար տամ,—ասում եր Գալուսար:

Այսպիսի խոսակցութեանից հետո Հեղուշը հեռանում էր տնից, գնում դեպի աղբյուրը, ուր կոմյերիտները ջրի ակն եյին մաքրում, խողովակներ անցկացնում, ջուրը գյուղամեջ բերելու համար:

Յեկավ ժողովի որը:

Քաղաքից յեկել էր հրահանգիչը. ժողովը բացված եր: Նախ և առաջ գեկուցվեց գյուղի բարեկարգութեան—շինարարութեան մասին:

Զեկուցողը Սըշալույսն էր, նա մի առ մի թվեց թե ինչ գործ է կատարվել վերջին ամսվա ընթացքում. —ճանապարհների մաքրելը, «կենս ծառի» մոտի կամուրջի վերանորոգումը, աղբյուրի ական մաքրելը և ջրի գեղամեջ բերելը, վոր դեռ չէր վերջացած, և մի շարք ուրիշ վերաշինութեաններ:

Զեկուցումից հետո նախագահը սկսեց կարգավ դիմումները. մի քանիսից հետո, վորոնք միաձայն անցան, կարդաց նաև՝

Ս. գյուղի կոմյերիտների բջիջին
Հեղուշ Սարոյանից

Դիմում:

Գանելով Լենինյան և կոմյերիտական կուսակցութեան ճշտութեանը և տեսնելով անվիս

կումբերի մաների արդարացի գործունեությունը և ժրջան աշխատանքը, յես խոստանում եմ կատարել բոլոր հրահանգները և գնալ լենինյան գծով, ուստի խնդրում եմ ընդունեք ձեր շարքերը:

Հեղու՛ճ Սարոյան:

19...2 XII.

Իմումի ընթերցումից հետո, նախագահը խոսք է տալիս հարցեր առաջարկելու:

— Ինչո՞ւ քաղաքում պիտո՞նք րական կազմակերպություն մեջ չես յեղել, — հարցրեց Արշալույսը:

— Հայրս արգելում էր, — կարմրած պապասխանեց Հեղուշը:

— Իսկ յեթե հիմա յեղ արգելի՞:

— Հիմա յեղ են արգելում, բայց այլևս ինձ չեն կարող խաբել և վախեցնել, յես արդեն հասկացա, թե Վորն և իսկությունը:

— Ինչո՞ւ ստիպեց քեզ մեր շարքերը մտնել:

— Շողերի հողը, — պատասխանեց Հեղուշը:

Բոլորը դարձացած իրար են նայում ու չեն հասկանում, թե ինչ և ուղում ասել Հեղուշը:

— Ինչպես թե Շողերի հողը, — հարցրեց նախագահը:

— Այն, Շողերի հողը, — ու Հեղուշը մի ասմի պատմեց գյուղում առաջին օրը պատահած

գեպը և սոսց.— Շողերի անեծքը, դա բոլոր թշվառների ու աղքատ-ճնշվածների անեծքն է, Մարգարտի «չանչը», դա բոլոր վորերի շանչն է, նրա արձամարհանքը գեպի հարուստը, նմանապես բոլոր թշվառներինն է. յես այդ օրը թեև վոչինչ չհասկացա, բայց մի բան գգացի, և այդ գգացածս այս մի քանի ամիսների ընթացքում պարզվեց ինձ համար ու յես առաջին անգամ կյանքիս մեջ գգացի, թե ինչ է նշանակում զբրկված և հզորի ձեռքին ճնշված լինել. յես իմացա, թե գյուղում ինչպես գորբաները մի գրվանքա ալյուրով խլում են աղքատի վերջին նեցուկ սև հողը ու նրանց շարտում սովի և թշվառություն գիրկը. յես այդ բոլորը գգացի այն օրը, յերբ Շողերից ու Մարգարտից հալածված՝ Վարոտի հետ գնում եյինք արտը: Նա, Վարոտը, անգիտակցաբար մեկ-մեկ բաց էր անում իմ աչքերը, պատմելով, թե ինչ միջոցներով են ձեռք բերված իրենց հողերը, Վարշավենց հարսի բուստանը, Գալուստի աղա Պետրոսի արտը, Սիրունենց Նազուկի խալիչեն, այդ բոլորը փոխադրեցին ինձ մի ուրիշ աշխարհ, ու յես փոխվեցի, յես այլևս առաջվա «համփա» Սերգոյի աղջիկ Հեղուշը չեմ:

Յես այդ ժամանակ քանի-քանի անգամ ուզեցի մտանալ ընկ. Արշալույսին, խոսել նրա

հետ այդ հողի մասին, մի բան ասել, թեև յես ել չեյի իմանում, թե ինչ պիտի ասեյի: Բայց բոլոր ընկերների արհամարհանքը դեպի «համփա» Սերգոյի աղջիկը յես եյին կասեցնում ինձ, և յես վերջի-վերջո մի յեղք գտա. — թողնել անցյալը, նոր կյանքով, նոր զգացմունքներով ապրել, և դա այն է, վոր մտնեմ կոմյերիաների շարքերն ու այնտեղ գործեմ, ցույց տամ և այն, վոր հոր արածով չի կարելի դատել վորդուն, հոր գործած մեղքերը չի կարելի բարդել աղջկա վրա:

— Իսկ յեթե մենք քեզ չընդունենք, իբրև «համփա»-ի աղջիկ, — հարցրեց Արշալույսը:

— Այն ժամանակ ինձ մնում է հիտաթափվել այն կարծիքից, վոր մինչև հիմա յես ունեցել եմ ձեզ վրա, կոմյերիաների վրա:


— Այսինքն:

— Այն, վոր չնայած նրան, վոր յես «համփա»-ի աղջիկ եմ, բայց և այնպես դուք ինձ պետք է ընդունեք, աշխատեք զարգացնել իմ մեջ այն ուղղությունը, վորը արդեն զարթնել է, վորով պարտավոր է գնալ մեզանից ամեն մեկը: Մյուս կողմից մեռցնել իմ մեջ այն անհատականը, «յես», վոր մանկությունից մտել է իմ մեջ:

— Իսկ Շողերի հողի համար ինչ ես մտա-

ծում, — ասաց մի պատանի, — ինչ կանեյիր, յեթե դու լինեյիր այդ հարցը լուծողը:

— Շողերի հողը այս տարվա ցանած կարտոֆելով պատկանում է Շողերին, և վոչ մի «համփա» Սերգո կամ Գալուստ իրավունք չունեն խլելու նրանից, նրա սեփականությունը:



Յես գիտեմ բոլոր մանրամասնությունը, — շարունակեց Հեղուշը, — յերեք տարի յե հայրս ուղարկել է այդ հողից, բայց վոչինչ չի վճարել Շողերին, բացի այն յերկու կոտ սև գարուց, իսկ այս տարվա վարը և ցանած կարտոֆելը յես համարում եմ այն յերեք տարվա վճարը, վորը պետք է արվի Շողերին:

Իսկ յեթե հայրդ չհամաձայնվի՞ քո այդ կար-
ծիքի հետ:

— Ինձ հարկավոր չէ իմ հոր համաձայնու-
թյունը, ինձ հետ ե խորհրդային իշխանությունը
և Լենինի ներկայացուցիչ կոմյերիտը գյուղում:
Մենք կհաղթենք:

* * *

Հեղուշը ընդունվեց կոմյերիտների շարքերը:
Ս. գյուղը առաջին անգամն էր տեսնում կոմյե-
րիտուհի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0341225

34345

8 215
Գինը 20 կոպ.